

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

---

« 27 » սեպտեմբեր 2020 թ. No 3345 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՄԲ  
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 20-ի թիվ 1370-Ա որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրությամբ պայմանավորված բնակչության բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների (Այսուհետ՝ Բժշկական կազմակերպություն) տնօրեններին՝
  - 1) դադարեցնել Բժշկական կազմակերպություն պլանային կարգով դիմած պացիենտների ընդունումը,
  - 2) իրականացնել բացառապես վերակենդանացման միջոցառումներ կամ անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում պահանջող պացիենտների ընդունում,

- 3) հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն ստացող պացիենտների առողջական վիճակի գնահատումից հետո՝ ապահովել վերջիններիս դուրս գրումները, հետագա հսկողությունը կազմակերպելով սպասարկող առողջության առաջնային պահպանման հաստատությունների միջոցով,
  - 4) հետ կանչել արձակուրդում և գործուղման մեջ գտնվող բժշկական անձնակազմի անդամներին,
  - 5) անհրաժեշտության դեպքում ծավալել լրացուցիչ մահճակալներ,
  - 6) սույն հրամանի ստորագրման պահից 1-օրյա ժամկետում Առողջապահության նախարարությանը ներկայացնել Բժշկական կազմակերպության պատասխանատու աշխատակցի կոնտակտային տվյալները՝ աշխատանքները օպերատիվ կազմակերպելու նպատակով:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Արտյոմ Սմբատյանին:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ